

# ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ԱԶԵՐԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ՝ ՎԵՃԻՆ ԼՈՒԾՈՒՄ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մոսկուայի Համայնավար կուսակցության կեղծոնական կոմիտէի կեղծոնատեղիին մէջ, Ուրբաթ օր, շարունակական խորհրդակցութիւնները Հայաստանի եւ Ատրպէյճանի Հանրապետութեանց եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատասխանատուներուն միջեւ: Սնոնց առաջին հանդիպումը տեղի ունեցած էր նոյն վայրին մէջ, նախագահ Միխայիլ Կորպաչովի եւ քաղաքական, պիւբլիցիստի բազմաթիւ անդամներուն ներկայութեան, Գերագոյն Խորհուրդի (կեղծական խորհրդարան) նիստէն ետք, ուր որդեգրուեցան սահմանադրական կարգ մը բարեկարգութիւններ:

Խորհրդարանը որոշած էր նաեւ հայերու եւ ազերիներու միջեւ հանդիպումներ՝ «բնականոնացնելու» Համար կրկու հանրապետութիւններու փոխ յարաբերութիւնները, Միխայիլ Կորպաչովի հովանաւորութեամբ: Այս որոշումին հիման վրայ է որ Հայաստանի եւ Ատրպէյճանի Համայնավար կուսակցութեանց առաջին քարտուղարներն ու երեսփոխանները, ինչպէս նաեւ վէճի առարկայ Ղարաբաղի Մարզի պատասխանատուները հանդիպում ունեցան Մոսկուայի մէջ, բայց առնուած որոշումներուն կամ դոյացած համաձայնութեան շուրջ ոչ մէկ լուսարանական տեղեկութիւն հաղորդուեցաւ ցարդ:

Հինգշաբթի օր կեղծոնական խորհրդարանը տեղեկացու կեղծոնական կոմիտէի կողմէ Լեռնային Ղարաբաղ զբոսարած ներկայացուցիչին՝ Արքատի Վոլսքի տեղեկագրին, որ հրատարակուեցաւ պաշտօնաթերթ «Փրաւտա»-ի Ուրբաթ օրուան համարին մէջ: Վոլսքի հաւասարապէս կը քննադատէ Հայաստանի եւ Ատրպէյճանի պատասխանատուները, զոհն ու ոճրագործը դնելով նոյն նժարին մէջ:

Ըստ «Փրաւտա»-ի Վոլսքի իր տեղեկագրին մէջ կ'ըսէ թէ «Պաքուի մէջ ճիշդ է որ տեղի ունեցան հակահայ ցոյցեր եւ միթիւնկներ, որոնք սարսափելի էին, բայց Հայաստանի մէջ եւս կացութիւնը պարզ եւ հանդարտ էր, հոն եւս տեղի ունեցաւ փոկրամ եւ ազերի ընտանիքներու պարտադրուեցաւ տեղափոխուիլ»:

Արքատի Վոլսքի յատկապէս քննադատած է հայ պատասխանատուները իրենց պարտաւորութենէն խուսափելուն համար եւ աւելցուցած թէ «լուծեալ Ղարաբաղի կոմիտէն կ'աշխատի ամէն գնով օրինականացուիլ եւ քաղաքական ուժի վերածուիլ»:

Կեղծոնական կոմիտէի այս ներկայացուցիչը ոչինչ չտած է քննադատելի Ատրպէյճանի մէջ, բացի Պաքուի ցոյցերէն եւ միթիւնկներէն, որոնք տեղի կ'ունենան հակառակ

բանակի կողմէ կրակմար հաստատուելուն: Իր տեղեկագրին մէջ ոչ մէկ յիշատակութիւն կայ Ատրպէյճանի մէջ ջարդուած հայերու, կողոպտուած եւ ապա հրկիւղուած բնակարաններու, ինչպէս նաեւ հարիւրաւոր խոչտանգուածներու մասին:

Իսկ օտար գործակալութիւններ Մոսկուայէն կը հաղորդեն, թէ հազարաւոր հայեր գործէ արձակուած են, հակահայ ցոյցերու եւ գրգռութիւններու ընթացքին իրենց աշխատանքի վայրերը շնորհակալանալնուն համար: «Ընկերվարական ճարտարարուեստ» թերթը, ակնարկելով գործէ այս արձակումներուն, իր Ուրբաթի համարով կը գրէ թէ Ատրպէյճանի ղեկավարները արգիլեցին հիմնարկներու եւ գործարաններու պատասխանատուներուն կամայական գործազրկումները:

Վոլսքի «Ղարաբաղի կոմիտէ»-ն քննադատելով կ'ուզէ ակնարկել այն մասին, թէ Հայաստանի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն, նոյեմբերին, երբ նոյն կոմիտէն կրցաւ ընտրել տալ իր անդամներէն Աշոտ Մանուչարեանը եւ ուրիշ համակիր մը (Պաշիկ Ստամպուլցեան) իրրեւ երեսփոխան: Աշոտ Մանուչարեանի հրաւերով գումարուեցաւ Հայաստանի Գերագոյն Սովետը, ուր հաւաքուեցաւ աւելի քան մեծամասնութիւնը: Խորհրդարանի նախագահութիւնը մերժեց ճանչնալ այդ նիստին օրինականութիւնը:

Արքատի Վոլսքի իր սուր քննադատութիւնները մասնաւորապէս ուղղած է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի «յայտնի եւ անյայտ» ղեկավարներուն դէմ, որոնք, ըստ իրեն, «հայ ժողովուրդը կը մղեն սայթաքի, պահանջելու համար այս մարզին Խ. Հայաստանի կցումը»:

Ատրպէյճանի արտաքին նախարարութեան պատասխանատու մը ԱՖՓէի Մոսկուայի թղթակիցին հաստատած է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Համայնավար առաջին քարտուղար Հենրիկ Պողոսեանի հրաժարումը, բայց աւելցուցած է թէ «Մոսկուան տակաւին չվաւերացուց անոր հրաժարականը»:

Հենրիկ Պողոսեանի գործակիցներէն մէկը Մոսկուայէն հեռաձայնով հարցապնդուելով յայտնած է թէ «Առջին քարտուղարը կը շարունակէ կատարել իր պաշտօնը, բայց անոր հրաժարումին շուրջ եղած տարաձայնութիւնները որոշ հիմ մը ունին»:

Համաձայն «Ղարաբաղի կոմիտէ»-ին, ազերի ցուցարարներու գլխաւոր հակառակորդը, պարտադրանքի տակ ներկայացուցած է իր հրաժարականը: